ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ*

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Դ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հնչակյան կուսակցության հիմնադիրներից երկուսը՝ Ավետիս Նազարբեկյանը և Մարո Վարդանյանը, 80-ական թվականների սկզբներին Պետերբուրգում ուսանելիս, կապված էին նարոդովոլյան գաղափարներով համակված ռուս ուսանողական շրջանների հետ։ 1883 թ. Սորբոնում սովորելու համար Պետերբուրգից Փարիզ անցնելով, նարոդովոլեց Հովհաննես Լորիս-Մելիքյանի հետ միասին նրանք առիթներ ունեցան հանդիպումներ ու մտավոր շփումներ ունենալու նարոդովոլյան վտարանդիների նշանավոր պարագլուխ Պ. Լավրովի հետ։ 1886 թ., արդեն որպես Նազարբեկյան ամուսիններ, նրանք տեղափոխվեցին Շվեյցարիա և մտան Ժնևի համալսարանը։ Ինչպես Նազարբեկյան զույգը, այնպես նաև նրանց գաղափարակից ընկերները, ուսանողներ Իուրեն Խանազատյանը, Բարրիել Կաֆյանը, իսկ փոքր-ինչ հետո նաև Սաքո Աղամիրզյանը, Հակոբ Մեղավորյանը և Հմայակ Խուշպուլյանը, 1887 թ. Ժնևում դիմք դրին արևմտահայերի ազատագրման գործին ծառայելու կոչված Հնչակյան կուսակցությանը[1]։ 1887 թ. աշնանը նրանք ձեռնարկեցին «Հնչակ» օրգանի հրատարակությանը, որի գրեթե բոլոր հոդվածները անստորագիր կամ Լ. Ակնարկյան ծածկանունով շարադրում էր թերթի արտոնատեր Ավետիս Նազարբեկյանը։

Գրական իր մկրտությունը Ավետիս Նազարբեկյանը ստացել էր Մարսելում հրատարակվող «Արմենիայի» էջերում, սակայն չկարողանալով համատեղել ռուս նարոդնիկներից ժառանգած գյուղացիական սոցիալիզմի գաղափարները «Արմենիայի» լիբերալ հայացքների հետ, Նազարբեկյանը շուտով խզում է իր կապերը այդ պարբերականից և նույնիսկ հատուկ պամֆլետ է գրում նրա խմբագրի դեմ «Հայակուլ քամելեոն» վերնագրով։

Ինչպես և ազգային-նարոդնիկական մյուս խմբակները՝ «Հնչակը» ևս էր անդրանիկ խոսքը ուղղեց հայ ժողովրդի «կրթված և հասկացող դասակարգին», առավելապես այդ «դասակարգի» երիտասարդությանը, ելնելով այն հայացքից, թե «լոկ նրա եռանդը, նրա խոսքը, նրա ուժը կարող են բարձրացնել թուրքահայ ընդհանրության խեղդված ոգին և ժողովրդի ոտների տակ պատրաս-

---

* Մի հատված հեղինակի «Ուրվագծեր XIX դ. II կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական կուսակցությունների պատմության» աշխատությունից։

[1] Հարկ է նշել, որ վերը հիշատակված խմբակի ձևավորման շրջանում նրան մոտ էր կանգնած նաև Գևորգ Ղարաջյանը, որը 1886 թ. մտել էր Մոնպելյեի գյուղատնտեսական դպրոցը, իսկ 1887—1889 թթ. սովորում էր Ժնևի համալսարանում. սակայն, մարքսիզմի ազդեցությանը ենթարկված, նա հեռանում է Հնչակյաններից, նախքան լույս կտեսներ «Հնչակ» թերթի առաջին համարը։ Թե հիրավի Ղարաջյանի մեջ մինչ այդ արդեն մարքսիստական բեկում էր կատարվել, այդ մասին վկայում են «Մշակի» 1888 թ. №№ 93, 105 և 127-ում նրա թղթակցությունները։

տել հաստատուն հող հեղափոխական գործի հաջողության համար»[2]։ Այնուամենայնիվ ինչպես բոլոր նարոդնիկները, «Հնչակը» ևս իրեն նշանաբան է դարձնում՝ գործել «ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և ժողովրդի համար»։ Իր անունը Գերցենի «Կոլոկոլից» փոխ առած, և անընդհատ զարթոնքի կոչեր հղելով հայրենի երիտասարդությանը, «Հնչակը» հետամուտ էր վերացնելու ժողովրդի և երիտասարդության միջև ընկած անջրպետը։ Չերնիշևսկու մահվան առիթով գրված հոդվածում թերթը ընդգծում էր ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատի ազդեցությունը հայ երիտասարդ սերնդի վրա. «Նիկոլայ Գավրիլովիչը կրթել է ևս բավականաթիվ ռուսահայ երիտասարդներ,—գրում է թերթը,—որոնք միշտ կրելով իրենց սրտում մեծ մարտիրոսի վեհ կերպարանքը և տոգորված խորին երախտագիտությամբ դեպի նա, ողբում են իրենց մեծ ուսուցչի անփոխարինելի կորուստը»[4]։

1887—1890 թթ. «Հնչակի» գաղափարախոսության նարոդնիկական նրստվածքները բացահայտելու տեսակետից վճռական նշանակություն ունի Հընչակյան կուսակցության 1888 թ. տպագրված անդրանիկ ծրագիրը։ Նվազ ցուցանշական չէր նաև «Հնչակի» 1889 թ. առաջին և երկրորդ համարներում Լ. Ակնարկյանի (իմա՝ Ավ. Նազարբեկյանի) տպագրած «Նոր հոսանք» հոդվածը, որն ամբողջովին նվիրված է կուսակցության ծրագրի տեսական հիմնավորմանը։

Իր այդ հոդվածում կուսակցության նարոդնիկ պարագլուխը ջանում էր թերթի ընթերցողներին համոզել, թե սոցիալիզմը դրսեկ հոսանք չէ հայ կյանքում, այլ ուսմունք, որ դրական հիմքեր ունի հայ իրականության մեջ, որտեղ անհատական արտադրության կից գոյություն ունեն ինչպես արհեստավորների, այնպես և գյուղացիների «համայնքներ»։ Հեղինակը կարևոր է համարում, մանավանդ, գյուղական համայնքների առկայությունը. դրանց մեջ նա տեսնում է «հայ գյուղական համայնական, կոմունական կարգերի, հողատիրական կոմունական կերպերի» հիմքերը։ Հայաստանում հարատևող գյուղական այդ համայնքների մեջ ծրագիր մեկնաբանող հեղինակը նշմարում է գյուղացիական սոցիալիզմի հաղթության գլխավոր երաշխիքը։ «Մեր, սոցիալիստներիս, ամենագլխավոր հոգսերիդ մեկն է... նախազգուշացնել հայ ժողովրդին կապիտալիզմի ախտից, առաջն առնել Հայաստանում այդ ախտի մուտք գործելուն»։ Կուսակցության «մոտավոր նպատակի»—«ռամկավարական-քաղաքական ազատության»—իրականացումն այն պատնեշն է, որ պիտի արգելք դառնար Հայաստանում կապիտալիզմի ներմուտին և պատվանդան լիներ «հեռավոր նպատակի»—սոցիալիզմի—կառուցման համար։ Ուստի, եզրակացնում է հեղինակը, հարկավոր է, որ հասարակության գիտակցական մասը կանխապես ջանք ու հարկավոր միջոցներ գործ դնե կապիտալիզմի սպառնալից թշվառությունները կանխելու և մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի համար նպաստավոր գյուղական համայնքների գոյատևությունն ապահովելու համար։

Հնչակյան ծրագրի դասակարգային և սոցիալիստական դրույթները գործնականում ներհակում էին նրա ազգային-քաղաքական պրակտիկային։ Երկու-երեք տարի անց այդ բանը զգաց նույնիսկ Հնչակյան կուսակցության պա-

2 «Հնչակ», 1887, № 1։
3 Տե՛ս, օրինակ, «Հնչակ», 1888, № 4—5, Ա[կնարկյանի] «Երիտասարդություն» հոդվածը։
4 «Հնչակ», 1889, № 4։

բագլուխը, երբ հարկ համարեց դեն նետել նարոդնիկական սոցիալիզմի շապիկը և հագնել նոր ժամանակներին պատշաճող մարքսիզմի վերնազգեստ։

Բնորոշ էր այն բանավեճը, որ տեղի ունեցավ անդրանիկ ծրագրի շուրջը «Արմենիա» թերթի աշխատակից Ա. Սյունիի (իմա՝ Ք. Օհանյանի) և «Հնչակի» խմբագիր Նազարբեկյանի միջև։ Ա. Սյունին ասում էր, թե անհնարին բան է արգելել կապիտալիզմի մուտքը։ Հառարկելով այն գրույթին, որ կապիտալիզմը նախադրյալներ է ստեղծում սոցիալիզմի համար, «Հնչակի» խմբագիրն ու ղեկավարը տալիս էր 80-ական թվականների նարոդնիկների պատրաստի պատասխան.

«Եթե կապիտալիզմն իր մեջ կրում է այնպիսի տարրեր, որոնք պատրաստում են սոցիալիստական կազմակերպության հաստատությունը, դրա համար դեռ անհրաժեշտ չէ, որ ամեն մի ժողովուրդ կրե կապիտալիստական կազմակերպությունը, որովհետև այն պատրաստիչ տարրերը կարող են զարգանալ և այլ միջոցով... Մեր կարծիքն այն է, որ եթե Հայաստանն ամփոփվե ռամկավարական-հանրապետական պայմաններում, նա իր տնտեսական սովորություններով ու առանձնահատկություններով կարող կլինի խուսափել կապիտալիստական բուն կազմակերպությունից, միանգամայն օգտվելով դրա հարկավոր ու առողջ պտուղներից»[5]։ Մինչդեռ հնչակյան անդրանիկ ծրագրի հեղինակները հետամտում էին ապահովագրել հայ կյանքը «կապիտալիզմի ախտից», վերջինս արդեն ճարակել էր նրա արևելահայ հատվածի օրգանիզմը։ Իհարկե նրանք անտեղյակ էին, որ Հայաստանի իրականությունը հեռու էր նաև ռուս նարոդնիկներին հուսադրող «հողատիրական կոմունական կերպերի» շորշոփներից։

Հանձնարարելով համայնական սոցիալիզմը որպես կապիտալիզմից ապահովագրող համադարման, հնչակյանները ենթադրում էին դրանով երաշխավորել հայ ժողովրդի լիակողմանի զարգացումը։ Ընդսմին, նրանք նեցուկ էին տրոնում «հնուց մեր կողմից ժառանգած գյուղական համայնքի» մեջ, և ունեին այն համոզմունքը, որ անցյալից եկող այդ ժառանգությունը կոչված է ապագայում մեծ դեր կատարելու հայ ժողովրդի բարօրության գործում, նրա առաջ ուղիղ ճանապարհ հարթելով դեպի սոցիալիզմը։

Առ այս Նազարբեկյանը վկայակոչում է Կ. Մարքսի՝ ռուս նարոդնիկներին հղած հայտնի նամակը, ուր «Կապիտալի» հեղինակը ասում էր, որ արևմտյան երկրներում սոցիալիզմի հաղթության դեպքում հետամնաց երկրները հնարավորություն կունենան իրագործելու սոցիալիզմը, շրջանցելով կապիտալիզմը։ Իր պատասխանի մեջ «Հնչակի» գլխավոր տեսաբանը հնարավոր էր գտել զանց առնելու մեր ընդգծած մարքսյան վերապահումը։

Ի տարբերություն «Արմենիա» թերթի հետևորդների, իրենց անդրանիկ ծրագրում «Հնչակը» և հնչակյանները ևս պաշտպանում էին այն կարծիքը, թե միայն ազատագրման համար ոտքի ելած արևմտահայերի զինված ապստամբությունն է, որ կարող է հարկադրել պետություններին միջամտելու հօգուտ հայկական ռեֆորմների։ «Եթե ուզում ենք,—գրում էր հետագայում «Հնչակը»,—որ Եվրոպան միջամտե և մեր դատին լուծում տա, ամենից առաջ պետք է մենք ինքներս մեր մեջ կենտրոնացնենք մեր բոլոր ուժերը, դնելով դրանց հեղափոխական ուղիի վրա։ Եվ միայն այդ ընթացքով մենք կարող

5 «Հնչակ», 1889, № 3։

կլիներ ցնցել եվրոպական տերություններին՝ մեր արյունահեղ կռիվներով թուրքի դեմ, դրանով շոշափելով և նրանց (իմա՝ տերությունների—Ա. Հ.) արևելյան շահերը, և այսպիսով միայն նրանց կամա-ակամա հարկադրված տեսնել միջամտելու մեր ու թուրք կառավարության միջադեպքում»[6]։ Ընդսմին «հայկական հեղափոխությունը» հետամտելու էր ավելի հեռահար խնդրի լուծման, քան հայաբնակ նահանգների վարչական ռեֆորմները։

Նարոդովոլցիներից հնչակյանները որդեգրեցին կազմակերպչական ցենտրալիզմի և տեռորիստական տակտիկայի գաղափարները։ Նրանք ևս ելնում էին այն հայացքից, թե հեղափոխությունը պետք է հաղթանակի «կազմակերպված փոքրամասնության ուժերով։ Կամենում էին ուժով ու հաջությամբ բռնակալությունից ետ առնել այն, ինչ որ դարեր առաջ նրանք իրենց էին հայերից՝ նրանց ինքնուրույնությունը։

Արևմտահայ շարժման հաղթանակի երաշխիքը «Հնչակը» տեսնում էր այն բանում, որ արևմտահայությունը կազմում է հայ ժողովրդի 2/3-ը, և որ Բեռլինի դաշնագրով նրա դատը արդեն մուտք է գործել միջազգային դիվանագիտության շրջանը։ Թուրքիայում իշխող բռնատիրությունը մոտ ապագայում հավաստի կործանում է սպառնում արևմտահայերին, նրանց դատապարտելով ծայրահեղ քայքայման, աղքատության ու պանդխտության։ Այս դրությունը շարունակվելով՝ սպառնում է արևմտահայ ժողովրդին դարձնել մի այլ տերության որս։ Հայության մեծամասնությունը մի բռնապետությունից պոկվելով, կընկնի մի այլ բռնապետության ճիրանները. նրա ազատության և առաջադիմության գործը կհետաձգվի երկար ժամանակով։

Այս նկատառումով է հենց, որ հնչակյան կուսակցությունը մոտավոր նպատակ էր դնում հայկական անկախ պետության մեջ միավորել Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ մտնող հայաբնակ հողերը։ Թուրքահայ ժողովրդի ազգային անկախությունն ու քաղաքական ազատությունը ձեռք բերելուց ու հաստատելուց հետո նրանք ձգտում էին ազատել օտարների լծից նաև ռուսահայերին ու պարսկահայերին և նրանցից կազմել դաշնակցային-ռամկապետական հանրապետություն։ Հնչակյանների անդրանիկ ծրագիրը կանխում ու զուշակում է նաև, որ դրանից հետո է, որ հայ ժողովրդի համար ճամփա կբացվի դեպի հեռավոր նպատակը, դեպի սոցիալիստական այն հանրակարգը, որին հանգելու է ամբողջ մարդկությունը։

Հնչակյանները առաջնահերթ էին համարում արևմտահայերի ազատագրումը, որի համար նպաստավոր նախապայման էին նկատում Բեռլինի դաշնագրության առկայությունը։ Մինչդեռ լիբերալները հայկական ռեֆորմներ էին աղերսում եվրոպական պետություններից, հնչակյանները հայկական հարցի լուծման անհրաժեշտությունը եվրոպական պետությունների ձեռքով անխուսափելի էին կարծում հայ հեղափոխականների կազմակերպած ցուցարարությունների ու գինված ապստամբությունների պայմանով։ «Միայն այդ դեպքում է, որ հակառակ իր կամքի, զոռոզ Եվրոպան, տեսնելով իր խաղաղությունը խախտված, պարտավորված կլինի վավերացնել հայ ժողովրդի պահանջները»[8]։

6 «Հնչակ», 1892, № 12, էջ 98։

7 Տե՛ս Հնչակյան անդրանիկ ծրագրի բնագիրը, որ արտատպված է «Պատմություն ս. դ. Հնչակյան կուսակցության», 1887—1962, Պեյրութ, հատ. Ա, էջ 36 և հտ.։

8 «Հնչակ», 1888, № 2 և 3։

Երբ ծանոթանում ես «Հնչակ» թերթի 90-ական թվականների համարներին, նկատում ես մի ձգտում՝ ներկայացնել հնչակյան կուսակցությունը որպես մի կազմակերպություն, որն իր ծնված իսկ օրից ունեցել է մարքսիստական կողմնորոշում և հանգիսացել սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Այսպես, տակավին 1893 թ. թերթը հայտարարում էր, թե «Հնչակի» «գոյության առաջին օրից մինչև այժմ (sic) մեր սկզբունքները միշտ եղել են սոցիալ դեմոկրատական»[9]։

Նույն միտքն են արտահայտում հնչակյան ղեկավարները, երբ «Հնչակի» 1905 թ. № 1-ի առաջնորդողում հայտարարում էին, թե «Հնչակը» «հենց իր առաջին տարեշրջանից» [sic], դիմագրավելով ամեն կողմից տեղացած կատաղի հարձակումներին, պարզել է գիտական սոցիալիզմի [sic] դրոշը և այդ դրոշն է եղել նրա գաղափարական գոյության հիմնաքարն ու փարոսը»։

Նման ազդարարության հանդիպում ենք նաև մեր դարի տասական թվականների սկզբներին գովելի եռանդով Կ. Պոլսում հրատարակվող հնչակյան «Կայծ» պարբերականում, ուր նրանք ուղղակի ազդարարում էին, թե 1887 թ. հրատարակելով «Հնչակ» թերթի առաջին թիվը, կուսակցության ժնևյան հիմնադիրները իրենց անդրանիկ քայլափոխերից իսկ «մարքսիստական տեսակետով առաջնորդվեցան»[10]։

Անգիտանալով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հիմնադրած գիտական սոցիալիզմի և նարոդնիկների հռչակած ուտոպիական սոցիալիզմի տարբերությունը, հնչակյանները անտեսում են այն իրողությունը, որ իրենց կազմավորման պահին հայ իրականության մեջ դեռ բավարար նախատվյալներ չկային մարքսիզմի կամ սոցիալ-դեմոկրատիայի տարածման համար և որ այդ պահին իրենք արծարծում էին ոչ թե պրոլետարական կամ գիտական սոցիալիզմի, այլ նարոդնիկների քարոզած գյուղացիական կամ ուտոպիական սոցիալիզմի սկզբունքները միայն։

Հարկավ, չենք ժխտում այն, որ եթե ոչ «իր գոյության առաջին օրից», դեթ իննսունական թվականների սկզբներից հնչակյան կենտրոնի ղեկավարությունը ձգտում էր վերաքննել իր անդրանիկ ծրագրի ազգային-նարոդնիկական գաղափարախոսությունը և նրան հաղորդել մարքսիստական երանգ։ Մի շրջադարձ էր այս, որ ակնբախ է դառնում, երբ թերթում ես «Հնչակը» 1891 թ. տարեհամարներից սկսած։

Այդ պահից է, որ անդրադառնալով ռուսական և հայկական իրականությանը, թերթը գրում էր. «Ռուս, որպես և հայ ժողովուրդները երկրագործ են գլխավորապես, բայց երկուսի կյանքումն էլ այսօր կատարվում է նմանօրինակ տնտեսական կերպարանափոխություն, այն է՝ մուտք են գործել կապիտալիստական արդյունաբերության տարրերը, երկրի կապիտալը սկսում է կամաց-կամաց կենտրոնանալ մասնավոր անհատների ու մասնավոր ընկերությունների ձեռքը... նրանք, ժամանակի ընթացքում գրավելով ավելի ու ավելի մեծ շրջան, կհայտնվեն տիրապետող, և կապիտալիստական արդյունաբերության լուծը թագավորելով, կքայքայվեն նահապետական կերպերը»[11]։ Սարկելով «Դրոշակին», որը շարունակում էր առաջատար դեր վերագրել

9 «Հնչակ», 1893, № 11—12 (ընդգծումը մերն է—Ա. Հ.)։

10 Տե՛ս «Կայծ», Կ. Պոլիս, 1913, Բ տարի, թիվ 10—11, էջ 324, Վանիկի հոդվածը։

11 «Հնչակ», 1891, № 14, էջ 6։

Ռուսաստանի համայնական հողատիրությանը, «Հնչակը» գրում էր, որ «Ռուսաստանում մուտք է գործել կապիտալիզմն և հակառակ ռուս ժողովրդի թե գիտակցության և թե կյանքի, քայքայում ու ոչնչացնում է նրա նույն համայնական հողատիրության կերպերը»[12]։ «Հնչակը» սկսում է նույնիսկ կասկածի տակ առնել նարոդնիկական այն հավատքը, թե գյուղացիական համայնքը բնական պատվար է սոցիալիզմի կառուցման համար։ Դրան նա սկսում է հակադրել իր համար իսկ նոր հայտնագործած այն միտքը, թե գյուղացի ժողովուրդը «իր տնտեսական տարբեր պայմանների շնորհիվ» «ընդունակ չէ յուրացնելու սոցիալիզմի գաղափարները»[13]։

Եթե կուսակցության ազգային-նարոդնիկական ծրագրում հնչակյանները իրենց հեռավոր նպատակի իրագործումը կապում էին նախակապիտալիստական հայ գյուղի համայնական գյուղացիության հետ, իրենց նոր ազգարարությունների մեջ նրանք ապագա հասարակության կառուցումը լծորդում են կապիտալիստական հասարակության ընդերքում կազմավորվող պրոլետարիատի դեկավարությամբ կապիտալիստական հարաբերությունները սոցիալիստականի վերափոխելու համար մղվելիք հեղափոխական կռվի հետ։ «Հնչակի» դեկավարը հիմա ելնում էր այն իրողությունից, որ առանց ժամանակակից պրոլետարիատի ո՛չ գյուղական համայնքի օգնությամբ և ո՛չ էլ կապիտալիզմի միջոցով անհնարին է հասնել հասարակության սոցիալիստական վերակազմությանը։ Ճիշտ է, մի պահ կարծես նա դեռ շարունակում էր կառչած մնալ «համայնական հողատիրության կերպերին» վերագրված կախարդանքին, կարծելով, թե հողատիրության այդ կերպերը դեռ դրական անելիք ունեն ոչ միայն Հայաստանի արևելյան, այլև արևմտյան հատվածներում։ Բայց երկար կյանք չունեցավ այդ պատրանքը ևս։ Ֆ. Լասսալի «Ի՞նչ է սահմանադրությունը» գրքույկի հայերեն թարգմանության առաջաբանում, որ գրվել էր 1894 թ., Նազարբեկյանը արձանագրում էր արդեն, թե արևմտահայ գյուղացին լքում է իր հողը, դաղթում քաղաքները և դառնում վարձու բանվոր, և որ նույնը կատարվում է նաև արևմտահայ արհեստավորության հետ։ Կուսակցության ծրագրի 1897 թ. հրատարակության մեջ Նազարբեկյանի հետևորդները հավաստիացնում էին նույնիսկ, թե իբր Թուրքիայի արդյունաբերական քաղաքներում տասնյակ հազարների է հասնում երկրի հատ ու կենտ գործարաններում աշխատող հայ բանվորների թվաքանակը[14]։ Այսպես խորհողներն արևմտահայ հասարակության ընդերքում արդեն նշմարում էին, մի կողմից, հայ բուրժուազիայի և, մյուս կողմից, հայ բանվորության բևեռացումը։ Նրանք հայտարարում էին, թե արևմտահայ ժողովուրդն արդեն իսկ թևակոխել է կապիտալիզմի այն շրջափուլը, երբ նա, մոռացության տալով արտակապիտալիստական զարգացման հավատամքը, կարող է և պետք է առաջ շարժվի եվրոպական պրոլետարիատի հետ համաքայլ։

Իրենց այս շրջադարձից հետո Նազարբեկյանի հետևորդները փորձում էին նոր լույսի տակ ներկայացնել անգամ Թուրքիայի մյուս ժողովուրդների կացությունը։ «Երբեք չպիտի չփոթել,—գրում էր «Հնչակը» տակավին 1891 թ.,—

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Տե՛ս «Ծրագիր հնչակյան կուսակցության» (երրորդ հրատարակություն հանդիպած մեկնաբանություններով), Լոնդոն, 1897, էջ 32 և հտ.։

տաճիկ բռնակալ կառավարությունը տաճիկ թշվառ ու ստրուկ աշխատավոր ժողովրդի հետ։ Ո՞ւմ հայտնի չէ, թե որչափ աղքատ, որչափ կեղեքված, որչափ հարստահարված է նույն այդ տաճիկ աշխատավոր ժողովուրդն իր սեփական կառավարության ձեռքով... Մի՞թե մենք այս րոպեիս ականատես չենք տաճիկ աշխատավոր ժողովրդի տնտեսական ավերման, որ նրան տանում է դեպի մահացումն։ Մի՞թե այս րոպեիս մենք ականատես չենք տաճիկ ժողովրդի քաղաքական կատարյալ ստրկության, որ հայոց քաղաքական դրությունից ոչ մի կերպ տարբեր չէ...»[15]։ «Հնչակը» նշում է անգամ, որ թուրք ժողովրդի տարբեր ծալքերում սկսում է խլրտալ ազատագրական շարժումը. «Թուրքիան և թուրքերը» առաջնորդողում 1892 թ. «Հնչակը» գրում էր. «Սոֆթաների, ուսուցիչների, սպաների, վաճառականների մեջ արած հարյուրավոր ձերբակալությունները, հարյուրավոր աքսորներ, պաշտոնյաների... և վերջապես սուլթանի մշտական երկյուղն ու ոստիկանական լարված ուշադրությունը թուրք հասարակության նկատմամբ—այդ բոլորը... ակներև ապացույց են, որ թուրք հասարակության գեթ կրթված մասի գիտակցությունը գործում է բռնակալության դեմ»[16]։ Հաջորդ առաջնորդողներից մեկում թերթը եզրակացնում էր. «Պարզ է, որ շահելու թուրք ժողովրդի համակրանքն ու աջակցությունը և կամ գեթ չեզոքացնելու համար նրա հակառակությունը հայերի դեմ, ասպատակային խումբը պետք է գործնականապես պաշտպան լինի այդ ժողովրդի հարստահարված մասի և միշտ ձգտե ապացուցանել, որ նրան թշնամի չեն հայերը և թե հայոց հեղափոխական ձգտումներն առհասարակ Հայաստանի ամեն հարստահարված ժողովուրդների օգտին են ծառայում»[17]։

Հիմա «Հնչակը» խոսում է նույնիսկ տաճիկ բռնակալության դեմ պայքարող ժողովուրդների հեղափոխական համագործակցության մասին։ Սակայն նման ազդարարություններից հետո իսկ հնչակյան կուսակցությունը չէր անում գործնական որևէ հետևություն։

Սրա պատճառն այն էր պարզապես, որ «Հնչակի» տեսաբան Ավ. Նազարբեկյանի մարքսիզմը սխեմատիկ էր ու մակերեսային։ Եվրոպական մայրաքաղաքների հեռակայից պատգամած հնչակյան տեսությունները, երկրի խոր ճանաչողությունից թափուր, աղարտում էին պատկերը այն իրականության, որի ազատագրական ձգտումներին ուղղություն տալու համար այնքան ջանք էր գործ դնում «Հնչակի» խմբագիրը, երբ փորձում էր, օրինակ, արևմտահայ սարաբաների մեջ տեսնել Թուրքիայի գյուղատնտեսական այն պրոլետարիատին, որին Թուրքիայում հաղթանակելիք գիտական սոցիալիզմի ջահակիր էր հռչակում։

Իրականությունը, դժբախտաբար, այն էր, որ կապիտալիստական կացութաձևը ճանապարհ էր հարթում Թուրքիայում արևմտաեվրոպական պետություններին հատկացված կապիտուլյացիաների անթացուպով։ Երկրի կյանքը, այդ թվում նաև նրա տնտեսական զարգացումը, միշտ ավելի ու ավելի էր կախման մեջ ընկնում գաղութատերերի դիրքեր նվաճելուն հետամուտ եվրոպական կապիտալից։ Թուրքական իշխանությունը հակակշիռ ուժ չէր հանդիսանում առանձին կողոպտիչների և երկրի ժողովուրդների տնտեսական զարգա-

15 «Հնչակ», 1891, № 9, էջ 1—2։
16 «Հնչակ», 1899, № 9, էջ 72։
17 Նույն տեղում, № 11, էջ 88։

ցումն արգելակող արտասահմանյան կապիտալի հանդեպ։ Թուրքիայի հպատակները շարունակում էին ենթակա մնալ հնավանդ արտադրաեղանակներին և դրանց սպասարկող բռնապետական ռեժիմի քմայքներին։ Մասնավորապես մարաբայությունը Թուրքիայում այդ պահին ևս հանդիսանում էր ոչ թե կապիտալիստական, այլ ֆեոդալական շահագործության ենթակա ճորտության մի տարատեսակությունը սոսկ։

Ճիշտ է, XIX դարի ընթացքում արևմտահայ արհեստագործները տեղ-տեղ փորձեր արեցին միջնադարյան համայնքների վիճակից անցնել մանուֆակտուրային արտադրության, սակայն Թուրքիայում մուտք գործող կապիտալիստական կացութաձևը չէ, որ գերակշռող ուժ էր դառնում այսպիսով, կամ նախադրյալներ ստեղծում բանվորական շարժման և սոցիալիստական պրոպագանդի համար։ Զրկվելով եվրոպական ապրանքատերերի մրցավազքին, Թուրքիայի վտիտ ձեռնարկությունները մեկը մյուսի ետևից չքանում էին աստիճարեղից կամ դատապարտվում աննախանձելի գոյավիճակի։ Զվելով երկրի ծովափնյա քաղաքները կամ գաղթելով Ռուսաստան, Հունաստան, Բալկաններ և Ամերիկա՝ արևմտահայ գյուղացիներն ու արհեստավորները հաճախ փաստորեն խղում էին կենդանի կապերը երկրի քաղատագրական ջանքերի հետ։

Հնչակյանների ղեկավար կենտրոնը անտեսում էր այն ճշմարտությունը, որ Թուրքական իրադրության մեջ արևմտահայերը տառապում էին ոչ այնքան կապիտալիզմի հասցրած հարիքից, որքան նրա զարգացմանը նպաստող պայմանների բացակայությունից։

90-ական թվականների սկզբներին հնչակյան ղեկավարները կոնակ էին դարձնում նարոդնիկների տեսություններին ոչ թե Թուրքիայում ծայր առած կապիտալիստական հարաբերությունների ծագման պատճառով, այլ հայկական հարցին նպաստող նոր դինակիցներ գտնելու մտահոգությունից մղված։ Հիրավի, այդ մի պահ էր, երբ Ռուսաստանի նարոդնիկական շարժումն ակնհայտորեն հոգեվարք էր ապրում։ Օրավուր ակնբախ էր դառնում մարքսիզմի գերակշռող աղդեցությունը արևմուտքում՝ աներկբա դարձնելով գիտական սոցիալիզմի միջազգային կշիռն ու նշանակությունը։ Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, մի՝կողմից, նարոդնիկական գաղափարաբանության մարքսիզմի հասցրած քննադատական անողոք հարվածները, մյուս կողմից, բացահայտում էին նարոդնիկական հայացքներից հրաժարվելու անհրաժեշտությունը։

1889 թ. ամռանը Փարիզում կայացել էր սոցիալիստների միջազգային անցրանիկ կոնգրեսը և սկզբնավորել Երկրորդ ինտերնացիոնալի գործունեությունը։ Բանվորների միջազգային շարժման նորաստեղծ այդ կազմակերպության մեջ գերազանց կշիռ էին ստանում մարքսիստական կուսակցությունները։ 1890—91 թթ. սկսած մայիսմեկյան ցույցերը ակներև էին դարձնելու պրոլետարիատի դերը միջազգային շարժման մեջ, առաջնություն տալով մարքսիստական կուսակցությունների աղդեցությանը։

Պատահական չէր, երբ 1889 թ. կոնգրեսին մասնակցող ռուսական նշանավոր սոցիալիստներից հնչակյաններն իրենց մանդատը հանձնել էին ռուս նարոդնիկական մտքի վետերան Պ. Լ. Լավրովին։ Բայց հնչակյանների ղեկավարության մեջ 90-ական թթ. սկզբին կատարված գաղափարաբանական վերակառուցումից հետո օրինաչափական էր նաև, երբ ինտերնացիոնալի հաջորդ

կոնգրեսին հնչակյանների մանդատը փոխանցվեց ռուսական մարքսիզմի պարագլուխ Գ. Վ. Պլեխանովին։

Ինչպես գերմանական սոցիալ-դեմոկրատների տեսական օրգան «Die neue Zeit»-ում հետագայում գրում էր Ավ. Նաղարբեկյանը, հնչակյան ղեկավարները այս շրջանում տարված էին այն հույսով, թե «սոցիալիստական կուսակցությունները կարող են իրենց բարձրացրած ձայնով «ազդեցություն գործել Եվրոպայի հասարակական կարծիքի և եվրոպական պետությունների վրա՝ օգնություն հասցնելու արյան մեջ խեղդվող հայ ժողովրդին՝ հայկական հարցի լուծման համար»[18]։

Իհարկե, հնչակյանների ընձեռած նոր կուրսի հետևանք պիտի համարել, երբ նրանք իննսունական թվականների առաջին կեսում սկսեցին թարգմանել «Կոմունիստական մանիֆեստը» կամ Լասսալի «Ի՞նչ է սահմանադրությունը»։

Մարքսիզմի գաղափարական ներգործության ցուցանիշներից մեկը պիտի համարենք նաև, երբ հնչակյան գործիչ Հ. Մեղավորյանը, յուրացնելով Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագման» դրույթները, նույն այդ պահին Լոզանում պաշտպանում էր «Հայկական ընտանիքի և ամուսնությանը» նվիրած իր դոկտորական հետազոտությունը։

Ակներև է, սակայն, որ հնչակյանների «Նոր կուրսը» ավելի շուտ անդրադարձնում էր 90-ական թթ. սկզբներից ի վեր միջազգային բանվորական շարժման մեջ մարքսիզմի ստացած կշիռը, քան այն տեղաշարժերը, որ այդ պահին կարող էր ինքնաբերաբար կատարված լինել հնչակյան մտավորականության գիտակցության մեջ, անդրադարձնելով Թուրքիայի ներսում կատարված «...արդյունաբերական հեղաշրջումը»։ Այնուամենայնիվ մասամբ մարքսիզմի գաղափարաբանության արձագանքներից էր, երբ 90-ական թվականներին «Երկրի» հնչակյան գործիչների մեջ երևացին մտավորականներ, որոնք հակվում էին այն մտքին, թե հայկական շարժման հաղթանակը ապահովելու համար անհրաժեշտ է, որ կուսակցությունը գործունեություն ծավալի երկրի այլազգի զանգվածների մեջ ազատագրական սերմեր սփռելու համար։

Կ. Պոլսից, Սասունից, Զեյթունից դատ, այդ նույն պահին հնչակյաններն իրենց գործունեության հանգրվան էին դարձնում Փոքր Ասիայի քաղաքները, կազմակերպություններ ստեղծում Տրապիզոնում, Մարզվանում, Յոզգատում, Սամսոնում և Գարա-Հիսարում։ Նրանք խուսափում էին Ռուսաստանի սահմանամերձ Վասպուրականից կամ Բասենից, ելնելով այն համոզմունքից, որ եթե այդ վայրերում հայկական ապստամբություն լինի՝ Անգլիան իսկույն կմիջամտի և կվիժեցնի հայերի ջանքերը[19]։ Թեպետև փոքրասիական վիլայեթների հայ բնաղաքաբնակչությունը հարաբերական մեծամասնություն էր կազմում մյուս ազգությունների նկատմամբ, այնուամենայնիվ փոքրամասնություն լինելով վիլայեթի ընդհանուր բնակչության մեջ, այդ վայրերը ամուր հենարաններ չէին հանդիսանում հնչակյանների գործունեության համար։ Ուստի և հասկանալի է, երբ 90-ական թթ. սկզբներին երկրում աշխատող հնչակյանների մեջ իսկ հայտնվում էին գործիչներ, որոնք Արևմտահայաստանի ազատագրման գործում փորձում էին ընդգրկել երկրի այլազգիներին։ Այսպես, Այնթարում

---

18 „Die neue Zeit", 1895, 1896, էջ 501։

19 Տե՛ս Ռ. Բերբերյանի «Երկու դարերի շեմքին» հոդվածը, «Հայրենիք» ամսագիր, 1939, № 1, էջ 141։

նրանք զբաղվում էին տեղական մանածագործարանների հայ և թուրք բանվորների գործադուլ կազմակերպելով։ Տիվրիկի շրջանում գտնված Խառնավիզ գյուղում հնչակյան Ժիրայրը գյուղացիներին կազմակերպում էր վաշխառուների դեմ, նրանց դիմադրության մղում հարկահանների քմայքների և թուրք ու հայ կապալառուների դեմ[20]։ Հնչակյան գործիչ Արամ Աչըգպաշյանը, Մինաս Սղլուի, Դանիել Ջավուշի, Ժիրայրի, Գալուստ Արխանյանի և Ծառուկյանի հետ մտահոգված էին Սև լեռան մոտերքում թուրք հեղափոխական Օյուքրիի և քուրդ Ալոյի հետ երկրի մանր ազգերի միասնական ճակատ հարդարելու՝ կառավարության դեմ[21]։ Ազգային անխտրականության տրամադրություններ ունեին նաև հնչակյան Զելոն, Գաբրիել Կաֆյանը, Բարսեղ Զաքարյանը, Հարությունը Թումանյանը, Մարտիկ Սարուխանյանը, իսկ փոքր-ինչ հետո՝ նաև հընչակյան նշանավոր գործիչ Փարամազը և ուրիշներ, որոնք առիթներ չէին փախցնում գյուղացիական հեղափոխության գաղափարներ պատվաստել նաև այլազգի միջավայրում։

1891 թ. «Հնչակում» լույս տեսավ Արևելցու Խարբերդից հղած հոդվածը, ուր հեղինակը նկարագրում էր հայ և թուրք գյուղացիների համատեղ ելույթը խճուղու տուրք գանձելու կառավարական հրամանի դեմ։ «Եվ ինչո՞ւ տաճիկ ժողովուրդը չպիտի միանա հայոց հետ,—հարցնում էր Արևելցին,—երբ կտեսնե, թե հայերը կպահանջեն հանրության կենաց բարվոքումը, առանց այլևայլ ազգային խտրության»[22]։ Նման ըմբռնում հանդես է գալիս նաև թերթի հաջորդ տարվա համարում տպագրված Ազատասերի հոդվածում։ Հեղինակը գրում էր, որ սխալ է անգիտանալ հայ և թուրք ժողովուրդների՝ կառավարության դեմ միանալու անհրաժեշտությունը. «Զարգացած, աղնիվ, խոհուն և սիրտ ունեցող հայը չէ կարող ատել ամբողջ ազգ մը, առավել ևս քաղաքականապես և տնտեսապես վերջին ծայրը ճնշյալ ազգ մը, ինչպես կը ներկայանա տաճիկ ժողովուրդը»[23]։

Երկրում աշխատող հնչակյան գործիչների՝ մյուս ժողովուրդների նկատմամբ դրսևորած նման լայնախոհությունը համապատասխան արտահայտություն է գտնում նաև կուսակցության արևելահայ ղեկավարներից ոմանց կողմից։ «Տարազի» 1893 թ. համարներում հայտնի գրող հնչակյան Ղ. Աղայանը տպագրեց «Քյորօղլու թուրը» իր հայտնի վիպերգությունը, ուր Քյորօղլին հանդես է բերված որպես համաժողովրդական մի հերոս, որը «վեր է կանգնած սահմանափակությունից և մարմնավորում է սուլթաններին ու խաներին ենթակա ժողովուրդների սոցիալական իղձերը և ծառանալով տիրող դասակարգերի դեմ, իր քաջարի ու անձնուրաց մարտիկներով պաշտպանելով հարստահարվածներին ու ճնշվածներին՝ առանց կրոնի և ազգության խտրության»[24]։

20 «Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 98 և հտ.։

21 Նույն տեղում, էջ 131 և հտ.։

22 «Հնչակ», 1891, № 8։

23 «Հնչակ», 1892, № 2, էջ 12։

24 Տե՛ս «Հայ դրականության պատմություն», հատ. 3, էջ 296։—Պոկելով հայ դրականության պրոցեսը քաղաքական պատմության ընթացքից, Աղայանի մասին գրված տեսության հեղինակը շրջանցում է գրողի հնչակյան կուսակցականության հանգամանքը, անգիտանալով, որ նրա Քյորօղլու վիպերգությունը անդրադարձնում է ոչ թե անդրկովկասյան, այլ արևմտահայ միջավայրում հասունացող նոր տրամադրություններ։ «Աղայանի մեկնաբանությամբ,— գրում է հեղինակը,—Քյորօղլին իբրև ժողովրդական հերոս, հավասարապես հարազատ է «ադրբեջանցիների (sic), քրդերի ու հայերի համար»։ Որ Քյորօղլին նաև ադրբեջանական ժողովրդի էպիկա-

Հնչակյան մտավորականների որոշ մասը կուսակցության հայացքների տարածման համար ըստ երևույթին չէր մոռացել կուսակցության անդրանիկ ծրագրի այն կետը, որը հրահանգում էր «Վաստակել համակրությունը հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի՝ մյուս բնակիչների ու ցեղերի, որպիսիներն են ասորիները, եզիդիները, քյուրդերը և այլնի դեպի հայ հեղափոխության գործը և նրանց աջակցությունն այդ գործում, որը միաժամանակ հայտնվում է և նրանց, իբրև նույն բռնակալության ձեռքով ճնշված ժողովուրդների ազատության գործը»[25]։ Նկատենք, սակայն, որ հին ծրագրի այս հրահանգում չրջանցվում էր գերակշռող թուրք ժողովուրդը. ավելին, ըստ ծրագրի, թուրք բնակչությունն է հենց, որի ձեռքով խեղդամահ է լինում մյուս ժողովուրդների ազատությունը։ Ծրագիրը խտրություն չի դնում թուրք իշխող և հպատակ ժողովուրդների միջև, իսկ ծրագիրը մեկնաբանող «Նոր հոսանք» հոդվածում պարզապես ասված էր, որ թուրք բռնապետությունը հենարան է գտնում «թյուրք ժողովրդի տգիտության մեջ, նրա կյանքի բոլոր կողմերի կատարյալ անշարժության ու նրա նախապաշարումների ծոցում, նրա կրոնական մոլեռանդության և օտարատյաց ու վայրենի բնավորության մեջ»[26]։ Ահա թե ինչու, խոսելով Թուրքիայում ճնշված ժողովուրդների մասին, անդրանիկ ծրագիրը ելնում էր այն իրողությունից, որ երկրի ժողովրդական զանգվածները տակավին հասած չլինելով իրենց ուրույն շահերի գիտակցությանը, հաճախ կույր գործիք էին դառնում իշխող ռեժիմի կամ ցեղակից ֆեոդալների ձեռքերում և նրանց թելադրանքով դիմադրում էին հայ ազատագրական շարժմանը։ Այս հանգամանքներում ոչ միայն համադեմոկրատական շարժում չէր ստեղծվում իշխող ռեակցիայի դեմ, այլև արևմտահայ ժողովրդի ելույթները հետապնդվում էին որպես անջատողական նպատակների հետամտող կամ «օտար պետությունների շահերին ծառայող խլրտումներ»։ Նման պայմաններում հայ գործիչների պրոպագանդիստական ջանքերն ապարդյուն էին անցնում։ Քանակի հաշվին որակ չդառնալով՝ հայերի ազատագրական շարժումը սեղմվում էր հայկական պատյանի մեջ, սահմանափակվում զուտ ազգային պահանջներով։ Հայկական շարժման համար վտանգավոր դրություն առաջացավ, երբ, մանավանդ, ֆեոդալական ռեակցիան սկսեց նրա դեմ գրգռել հետամնաց քուրդ տարրերին, որոնք կարող էին նստակյացության անցնել միայն հայապատկան հողերի զավթումով։ Ստեղծվում է մի վիճակ, երբ համերաշխության ու համագործակցության քարոզները հասցեագրվում էին ոչ թե օտարազգի զանգվածներին, այլ նրանց վերնախավերին։ Այսպես, հնչակյան պրոպագանդիստ Ռ. Կաֆյանը փորձում էր հարաբերությունների մեջ մտնել Դերսիմի քուրդ բեյի հետ՝ «միացյալ ուժերով պայքարելու համար հասարակաց թշնամիին՝ թուրք կառավարության դեմ»[27]։

կան հերոսն էր, այդ հանրահայտ է։ Սակայն սխալ հետնախորքի վրա ներկայացնելով Աղայանի 90-ական թթ. մտահայեցությունը՝ հեղինակը համառորեն զանց է առնում, որ հայ գրողը նկատի ուներ ոչ թե «ադրբեջանցիներին» կամ «Անդրկովկասի բազմազգ աշխատավոր գյուղացիությանը», այլ Թուրքիայի ներսում տիրող կարգերի դեմ հայ, թուրք և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարի խնդիրը (հմմտ. նույն տեղում, հատ. 3, էջ 296 և 298)։ Ակներև է, որ 90-ական թթ. Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական համատեղ պայքարի խնդիրները դեռ չէին կարող գրաղեցրած լինել հնչակյան գրողի միտքը։

25 «Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 36։

26 «Հնչակ», 1889, № 2։

27 «Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 87։

1895 թ. Թուրք կառավարությունը ձերբակալում է Կաֆյանին և որպես ռուսահպատակի նրան հանձնում Կ. Պոլսի ռուսական դեսպանին։ Վերջինս նրան էտապով Պետերբուրգ է հղում՝ դատի տալու համար։ Կաֆյանի դատական ինքնապաշտպանության փայլուն ճառը արձագանք գտավ նույնիսկ արտասահմանի սոցիալիստական մամուլի էջերում։

Հայ ազատագրական շարժման ազգային մեկուսացումը ուներ իր օբյեկտիվ պատճառները։ Դրանցից վճռականը Թուրքիայի տնտեսական հետամնացությունն էր։ Երկրի արտադրողական ուժերի և հաղորդակցության միջոցների զարգացման նկուն աստիճանը պայմանավորում էր նրա տարալեզու ժողովուրդների սերտ կապերի բացակայությունը և նրանց պահում տնտեսական ու մշակութային տարբեր մակարդակների վրա, պատճառ դառնալով նրանց փոխադարձ օտարացմանը, սերմանելով նրանց մեջ փոխադարձ անվստահություն ու թշնամանք և նպաստավոր մթնոլորտ ստեղծելով թուրք կառավարության և իշխող հասարակաշերտերի հայահալած քաղաքականության համար։

* * *

Ո՛չ հնչակյանների հին ծրագիրը և ո՛չ էլ նրանց նոր դաղափարախոսությունը արգելք չեղան, որ կուսակցության արևմտյան կազմակերպություններում ազատ ելումուտ ունենային հայազգի այլազան տարրեր, ներառյալ մեծահարուստ վաճառականներին, ազդեցիկ ազաներին և բարձրագիր եկեղեցականներին։ Բավական էր միայն, որ նրանք համերաշխ լինեն կուսակցության ծրագրին և առաջին հերթին նրա մոտավոր նպատակին։ Իր մի հոդվածում անդրադառնալով կուսակցության սկզբնավորմանը, «Հնչակը» ինքն իսկ խոստովանում էր, թե իր դրոշակը պարզածին պես կուսակցության շուրջը հավաքվեցին այլազան հայացքների տեր մարդիկ՝ պահպանողական, առաջադեմ, միապետական կամ հանրապետական և այլն, որոնք ցանկանում էին, այսպես կամ այնպես, ազգի ազատությունը, «մերժելով հետևողական քաղաքական որևէ համոզմունք ու աշխարհընկալում»[28]։

Թե ինչ վիճակ էր կուսակցության ներսում արդեն իսկ 90-ական թթ. սկզբներին կամ ինչ մտայնություն էր տիրում երկրում գիտական սոցիալիզմի մասին նրանց վարած պրոպագանդայի շուրջը, այդ մասին կարելի է կարդալ կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Ռ. Խանազատյանի հուշերում։ «Տրապիզոնում և Կ. Պոլսում (1890 թ.) ունեցած գործունեությունն իսկ պարզ կերպով ցույց էր տվել, որ մարքսիստական գործունեության համար այդ երկրում ոչ մի հող չկար»,—գրում էր Ռ. Խանազատյանը[29]։ «Քիչ չէին եղել դեպքեր, երբ Պոլսում մշեցի մշակներին սոցիալիզմի, դասակարգերի հավասարության մասին խոսածս միջոցին, ինձ ընդհատել էին ասելով.

«Թո ըմբոր տուն չը թալլին, ըմբոր կնիկ, ազջիկ չփախցուն, ըմբոր ցանքս չը վառին, ուրիշ բան մրդի պետք չէ»։

Եվ կամ այլ շրջաններում ինձ հանկարծ հարց էին տվել.

— Այդ ձեր ասած սոցիալիստական կարգերը ո՞ր երկրի մեջ կան։

Եվ երբ սկսել էի բացատրել, թե առայժմ ոչ մի երկրում չկա, բայց եվրոպական բոլոր երկրներում էլ մեծ թվով սոցիալիստներ կան, որոնք աշխատում

28 «Հնչակ», 1897, № 12։

29 «Հայրենիք» ամսագիր, 1924, № 2, էջ 121։

են սոցիալիստական հեղափոխություն առաջացնել և այլն, ինձ պատասխանում էին.

— Էհ, անի որ կըսեք, դեռ ոչ մի տեղ այդ կարգեր չկան, մի՞թե հայերս պիտի սոցիալիզմի առաջին օրինակը տվողը ըլլանք։ Թող առաջ մեզմե զարգացած ազգեր հաստատեն այդ կարգերը, վերջը մենք անոնց կհետևենք»[30]։

Այս կարգի դիտողությունները ռեալիստորեն մտածող հնչակյան գործիչներից ոմանց համոզում էին, հարկավ, որ Թուրքիայում նպաստավոր հող չկար ոչ միայն հետևողական մարքսիստական կուսակցություն ստեղծելու, այլև անգամ նարոդնիկական սոցիալիզմի պրոպագանդման համար։

Չի կարելի, այնուամենայնիվ, պրոգրեսիվ երևույթ չհամարել գիտական սոցիալիզմի այն պրոպագանդը, որ տանում էր 1893 թ. նույն Ռ. Խանազատյանը ամերիկահայ բանվորների մեջ։ Դիտական սոցիալիզմի հայերեն անդրանիկ խոսքն էր դա, արտասանված դիպուկ պահին և դիպուկ վայրում։

Սակայն հիմնականում հնչակյանների հետամտած «հեռավոր նպատակը» չէ միայն, որ տարաձայնություններ էր առաջացնում կուսակցության արևմտահայ կազմակերպությունների ներսում. ավելի լուրջ և ավելի վտանգավոր բարդություններ էին առաջացնում կուսակցության «մոտավոր նպատակի» իրականացման միջոցների մասին եղած առարկությունները։

90-ական թվականների կեսերին հայկական շարժման դեմ երկրում սաստկացած հալածանքների պահին հնչակյան շարքերում ծագում էին տագնապալից տրամադրություններ։ Անհամեմատ ավելի լայն ծավալ և ծանր հետևանքներ ունեցավ հնչակյանների ներկուսակցական այն տագնապը, որն իրեն զգալ տվեց մանավանդ 1896 թ. Լոնդոնում կայացած նրանց առաջին ընդհանուր պատգամավորական ժողովում։ Այդ պահին է, որ հնչակյան կենտրոնի պաշտպանած «սոցիալիզմը» և մանավանդ արևմտահայ շարժման նրա պրակտիկան բախվեց կուսակցության արևմտահայ կազմակերպություններում զորեղացած լիբերալների դիմադրության ժայռին՝ պատճառ դառնալով կուսակցության երկփեղկմանը։

Լոնդոնում գումարված առաջին պատգամավորական ժողովում մեծամասնություն կազմող արևմտահայ հնչակյանները պահանջում էին գործող ծրագրից դուրս նետել սոցիալիզմի հարցը, մշակել անխառն «ազգային ծրագիր»։ Նրանք մատնանշում էին, որ եվրոպական պետությունները, որոնց վճռականությանն էր թողնված հայկական հարցի լուծումը, չեն կարող բացասաբար չվերաբերվել դեպի ազգային մի շարժում, որի գլուխ կանգնած են սոցիալիստները։ Դրանով, ասում էին նրանք, կուսակցությունը իրենց դնում է «ազգային դատից» դուրս։

Փոքրամասնություն կազմող ռուսահայ և պարսկահայ պատգամավորները պաշտպան կանգնեցին հնչակյան կուսակցության սոցիալիստական կողմնորոշմանը։ Սակայն փոքրամասնության մեջ լինելով՝ նրանք անկարող էին մեծամասնությանը պարտադրող որոշումներ կայացնել։ Արփ. Արփիարյանի, Մ. Տամատյանի, Հ. Ճանկյուլյանի գլխավորած մեծամասնության պատգամավորները լքելով նիստերի դահլիճը և հավաքվելով այլ սրահում, ընտրում են կուսակցության նոր վարչություն և փոքրամասնության պատգամավորներին պահանջ դնում՝ իրենց հանձնել կուսակցության գործերն ու գույքը։

30 Նույն տեղում, էջ 121—122։

Փորրամասնականները դիմեցին անգլիական դատարանին, որը կուսակցության իրավատեր ճանաչեց նրանց ներկայացուցիչ Նաղարբեկյանին՝ կուսակցության հիմնադրին և նրա պաշտոնաթերթի սեփականատիրոջը։

Լքելով Լոնդոնը, մեծամասնականներն իրենց վերանվանեցին «Հնչակյան վերակազմյալների կուսակցություն»։ Իրենց գործունեության կայան դարձնելով Եգիպտոսը՝ 1897 թ. նրանք սկսեցին հրատարակել «Մարտ» օրգանը։

Թեպետև ներկուսակցական տարաձայնությունները սնվում էին սոցիալիզմին թեր ու դեմ տեսակետների շուրջը, սակայն հնչակյանների մոտ բախումը տեղի ուներ իրապես կուսակցության լիբերալ և դեմոկրատական կողմնորոշումների շուրջը, որչափ հնչակյանների գործունեության մեջ սոցիալիզմի պարագան ոչնչան դեր էր կատարում միայն։ Էրզրումի 1889 թ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ցույցը, հնչակյանների 1890 և 1895 թթ. Պոլսի ելույթները, Սասունի 1893—94 թթ. և Զեյթունի 1895 թ. նրանց ապստամբությունները և վերջապես 1896 թ. Վանի կռիվներում նրանց ունեցած մասնակցությունը կամ այդ տարիներին բուն երկրում և փոքրասիական քաղաքներում նրանց կատարած աշխատանքը անմիջական աղերս չունեին հնչակյան կենտրոնի սոցիալիստական ազդարարությունների հետ։ Փաստորեն պատգամավորական ժողովի քննադատները ևս դժգոհ էին կենտրոնի ղեկավարությունից, աչքի առաջ ունենալով գլխավորապես հայկական շարժման և հայկական հարցի առաջ ստեղծված քաղաքական փակուղին։

Քննադատ-պատգամավորները գիտեին, որ չարդելով հայ գյուղացիներին ու քաղաքացիներին, սուլթանը շամփրում էր ոչ թե հնչակյանների «հեռավոր նպատակը», այլ հետամուտ էր արյան մեջ խեղդելու Հայաստանի անկախության «մոտավոր նպատակի» համար նրանց կազմակերպած ցույցերն ու մարտական ելույթները։

Ելնելով այն իրողությունից, որ «վերակազմյալ» հնչակյան աչքի ընկնող գրողներից Ա. Արփիարյանի, Լ. Բաշալյանի, Ա. Զոպանյանի գրական-գեղարվեստական գործերը դեմոկրատական և ռեալիստական բովանդակություն ունեն, նրանց հասարակական-քաղաքական գործունեությունը բնութագրող հեղինակները հաճախ աչք են գցում այդ գործիչների գլխավորած շարժման լիբերալ ուղղության առջև։ Նույն սխալն են կատարում նաև ոմանք, երբ նշելով ոուս առաջավոր գրողներից գրանցից ոմանց կրած գրական ազդեցությունը, սխալ հետևություններ են անում նրանց քաղաքական դիրքավորման մասին։ Հայտնի է, մասնավորապես, Արփիարյանի և Դր. Արծրունու միջև եղած սերտ առնչությունը։

Հիրավի, «վերակազմյալ» հնչակյանները ունեին այն հայացքը, թե հայկական շարժումը վիժում է, որչափ «հայ ժողովուրդը՝ իր հավաքականությունը, իր ունեվորներով և մտավորականներով՝ անտարբեր մնաց ազգային տառապանքի բարձման սրբազան գործին հանդեպ։ Դիմադիր կանգնելով «արմատականների» հեղափոխական տակտիկային, նրանք միտված էին պաշտպանելու «հավատքական շահը» և «ցեղային ինքնապաշտպանության գորավոր բնազդն ներշնչված ազատ ազգայնականությունը»-ը և որդեգրում «անայլամերժ ու բարեշրջական» վարքագիծ, հրաժարվելով «սոցիալիզմի քաղցրահնչյուն, բայց երազական գաղափարներից»[31]։

31 «Ծրագիր վերակազմյալ հնչակյան (ազգայնական ազատական) կուսակցության», Պոսթրն, 1919, էջ 4—5։

Հին ու նոր հնչակյանների պայքարը սրվեց մանավանդ նրանց մամուլի էջերում։

Իր հոդվածներում Արփիարյանը որոշ մերկացումներ էր արել Կ. Պոլսի հնչակյանների գործունեության մասին։ Օգտագործելով նրա գրածները, մայրաքաղաքի ոստիկանապետ Նազիմ բեյը ձերբակալել էր մի քանի հնչակյաններ։ Այս բավական եղավ, որ «վերակազմյալների» դեմ մղվող պայքարը դյուրացնելու մտայնությամբ՝ «Հնչակը» մատնիչության մեջ մեղադրեր արևմտահայ ականավոր գրողին և իր համախոհներին նշանավակեր որպես «նապիմականների», այսինքն՝ թուրք ոստիկանության վարձկանների[32]։ Իրենց հերթին «վերակազմյալները» ամբաստանում էին հին հնչակյաններին դրամական զեղծումների, երկիրը անզեն թողնելու և Սասունին ու Զեյթունին անհրաժեշտ օգնություն չհասցնելու մեջ։ «Մարտ» օրգանը մեղադրում էր կուսակցության հին կենտրոնին, շեշտելով այն միտքը, թե իր ընկերական ուղղությամբ այն... «պատճառ եղած է հայ ժողովրդի շատերուն այս գործեն չեղոքացնելուն, և մանավանդ պատճառ եղած էր, որ Եվրոպան ապատություն չշնորհե ընկերվարական հայերուն»։

1898 թ. Լոնդոնում լույս տեսած «Նոր կյանք» պարբերականում «վերակազմյալ» հնչակյաններին հարած Արշակ Չոպանյանը, հիմնավորելով կուսակցության նոր ուղեգիծը, գրում էր. «Փոխանակ անիմաստ ու թեթև հանդգնություններով հայրենիքին մեջ ցեղին ապահովությունը հետզհետե վտանգելու, փոխանակ նյութապես ազգը օրեօր ավելի տկարացնելու, հայ տղաքը թող պատրաստվեն բարոյական նեցուկներ ըլլալ կիսամեռ ազգին, անոր հոգին կենդանի պահել, անոր վարկը բարձրացնել, անոր գոյությունը ամրացնել։ Դպրոցը, վաճառականությունը, արհեստները, գիտությունը, գեղարվեստները, գրականությունը—ահա անգին պայմանները, որոնցմով մեր ցեղը պիտի վերականգնի։ Օսմանյան կայսրության ամենեն զարգացած, ամենեն հզոր ցեղը ըլլալ ջանանք... Եթե հայերը ավելի զարգացում, ինքնաճանաչություն, բարոյական մշակություն ունենային, թուլացումը, ստրկացումը, համակերպությունը ինքնին անհետացած կըլլային. ամեն հայ պետք եղած ատենը զենք մը գործածել կգիանար, և աշխարհիս առջև ինքզինքը պաշտպանելու անկարող ողորմելի ժողովուրդի մը տխուր պատկերը չէինք ներկայացներ»։

Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, շարունակելով կառչած մնալ հայկական շարժման դիվանագիտական կողմնորոշմանը, «վերակազմյալները» ևս միայն Բեռլինի դաշնագրությունը ստորագրող պետությունների մեջ էին տեսնում Արևմտահայաստանի ազատագրման հեռանկարը։ Մեր հիշատակած հոդվածում Չոպանյանը գրում էր. «Զենք կրնար հավակնիլ կարծելու, թե մենք հայերս այնչափ նյութական ուժ ունինք, որ մեծ հեղաշրջումի մը ժամանակ, հակառակ Ռուսիո, Գերմանիո և Ֆրանսիայի կառավարությանց ակներև ընդդիմությանը և հակառակ տեղական, աշխարհագրական և պատմական զարհուրելի դժվարությանց, կարենանք մինակնիս քաղաքական հաջողություն մը ձեռք բերել...։ Մեր հեղեղորեն թափած արյունը չէ մոռացված, անի տարր մըն է, որ պիտի հաշվի առնվի, և պիտի գործածվի այս կամ այն մեծ պետության շահուն... Պետք է կարող ըլլանք մեր շահը որոշ տեսնելու, և զայն եվրոպական մեծ շահերուն հետ համաձայնեցնելու... Արյունկզակ դպրոցականներու

32 «Հնչակ», 1897, № 11,12։

ձեռքեն ազատելու է ազգը։ Մեր աղետքները աշխարհ տակնուվրա ըրին... Ասիկա մեծ դեր մըն է, որ մենք խաղացած եղանք անգիտակցաբար։ Կը մնա հիմա գիտնալ այն օգուտը զոր մենք ալ պետք է քաղենք, այսչափ վնասե հետո, բոլոր այս դժբախտություններեն... Տաճկաստանը անշուշտ բնակելի երկիր մը պիտի դառնա և քաղաքակրթությունը պիտի անարգել հոն իր գործը սկսի, այս կամ այն եվրոպական զորության ձեռքով։ Այդ նոր թվականը բացված ատեն, պետք է որ մեր ժողովուրդը պատրաստ ուժեր ունենա երկրին մեջ զորեղ դիրք մը գրավելու, ապա թե ոչ՝ ջնջվինք՝ ավելի դյուրավ՝ եվրոպական տարրին տիրական հոսանքեն քան տաճկին սուրեն»[33]։

Նույն տեսակետը արծարծում էր «վերակազմյալների» օրգան «Նոր կյանքը» նաև հետագայում։ Այսպես, պարբերականի դեկավարող ուղղություն բացահայտող 1898 թ. № 6-ի առաջնորդողում ևս կարդում ենք.

«Հայաստանի խնդիրը այսօր Եվրոպայի էն կարևոր հարցերեն մեկն է, որ երբ կլուծվի, ան ատենն է որ 1870-ին սկսած պատմությունը կրնանք իմաստասիրել, գնահատել։ Հիմա ջանքերնիս պետք է ըլլա որ այդ լուծումը ազգին հույսերը պսակե։ Այդ ուղղության մեջ մեր էն ամուր հենարաններն մեկը 61-րդ հոդվածն է. հայկական խնդիր անոր միջոցով եվրոպականացած է, փոխանակ Թուրքիո ներքին մեկ պարզ դավառական դժվարություն մնալու...

Այս զանազան պայմանները, որոնք իրարու միանալով պիտի բարեփոխեն Հայաստանի վիճակը, անոնց գլխավորներեն մեկն է 61-րդ հոդվածը։ Չտրտրնջանք անոր դեմ, այլ ջանանք մեր հատակագծին ի նպաստ անկե առնել, ինչ օգուտ որ կրնա տալ»[34]։

90-ական թվականների կեսերին հնչակյան կուսակցության համար ծանր վիճակ ստեղծվեց նաև Անդրկովկասում։ 1895 թ. ցարիզմը Մնատեսի բանտը նետեց և ապա Ռուսաստան աքսորեց հնչակյան կուսակցության Թիֆլիսի դեկավարներին՝ Ղ. Աղայանին, Ռ. Խանազատյանին, Շիրվանզադեին, Ատրպետին, Հ. Տեր-Միրաքյանին, Սարգիս Ադամիրզյանին, Ս. Սանդրոյին, Խաչիկ Վարդանյանին և Ռ. Բերբերյանին[35]։

Ժանդարմական հալածանքներից անկախ, հնչակյան կուսակցության անդրկովկասյան կազմակերպությունների ներսում իսկ կային տարաձայնություններ, որոնք նրանց արգելում էին հանդես գալու և գործելու որպես դաշափարապես միաձույլ կուսակցություն։

1890-ական թթ. առաջին կեսում հնչակյանների անդրկովկասյան դեկավարների մեծ մասը համամիտ չէր կենտրոնի «մարքսիստական» դիմորոշմանը. նրանք դրսևորում էին իրենց անգլիական կողմնորոշումը. Հայտնի է խանդավառ այն հանդիպումը, որ նրանք կազմակերպեցին զլադստոնյան Daily Telegraph» թերթի թղթակից Էմիլ Դիլոնի հետ Աղստաֆայի կայարանում։ 1895 թ. Թիֆլիսի ժանդարմական վարչությանը տված իր բացատրությունների մեջ Ղ. Աղայանը հայտնում էր, որ ինքը չի բաժանել հնչակյանների հեռավոր նպատակը և հարել է այդ կուսակցությանը, նկատի ունենալով սոսկ արեմտահայերի ինքնապաշտպանությունը և սասունցիներին օգնություն հասցնելու ան-

33 «Նոր կյանք», 1898, № 8, էջ 116։

34 «Նոր կյանք», 1899, № 6-ի առաջնորդողը, որի հեղինակը Արփիարյանն էր անշուշտ։

35 «Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 223։ Ռ. Բերբերյան. Երկու դարերի շեմքին, «Հայրենիք» ամսագիր, 1939, № 4, էջ 62։

հրաժեշտությունը։ Ղ. Աղայանը անկեղծ էր մանավանդ, երբ հայտնում էր, որ ընդամենը անհրաժեշտ չէ համարել կուսակցության կենտրոնի կողմից իրենց վրա հսկիչ նշանակված «գործակալների» կարևորությունը. ակնարկը գլխավորապես վերաբերում էր կենտրոնի «մարքսիստական» նոր կուրսի պաշտպան Սաքո Աղամիրզյանին։ Պետք է գործել ոչ թե Լոնդոնի ցուցմունքներից հրահրված, այլ հանգամանքների կոնկրետ թելադրանքներից ելնելով, ասում էր Աղայանը։ Պետք է սպասել և ուշադիր հետևել մանավանդ «մայիսյան ռեֆորմների» համար պետությունների նշանակած «եվրոպական հանձնաժողովի» գործողություններին[36]։

Թիֆլիսի հնչակյան ղեկավարների մեջ կային տարաձայնություններ նաև տակտիկական հարցերի շուրջը։

Շիրվանզադեն վկայում է, որ Թիֆլիսի հնչակյան կոմիտեին անդամակցելու տարիներին Թիֆլիսի հնչակյան կոմիտեում ինքը և Աղայանը շարունակ դիմադրում էին դրամ ստանալու նպատակով հարուստներին ահաբեկելու առաջարկների դեմ, այն պատճառաբանումով, թե «հայ դատը չպետք է ապականել անհատների արյունով։ Այլ բան է, երբ տեռորը գործադրվում է մի մատնիչի վերաբերմամբ, բայց դրամի համար թափել մարդկային արյուն՝ դա կնշանակեր պղծել մի հեղափոխական ոգի»[37]։

Ուշագրավ է, որ Աղայանի հայացքները բնորոշող կարծիքները ի հայտ եկան նաև 1898 թ. նրա հրապարակած «Ժամանակակից ատենախոսության» մեջ։

Արևելահայ գրականության մեջ Ղ. Աղայանը ժողովրդայնության սկզբունքներով տոգորված, ժողովրդի շահերին նվիրված և ժողովրդի կողմից սիրված այն հեղինակն էր, որի գրականությունը մի պահ լիցք ու ուղղություն էր ստացել Արովյանի և Նալբանդյանի դեմոկրատական լուսավորչության գաղափարներից։ 80-ական թթ. նա արձագանքում էր ազգային-ազատագրական այն խնդիրներին, որոնց դրոշակակիրն էր հանդիսանում Բաֆֆին։ Այդ չէր խանգարում, որ գրողը քննական վերապահումներ ունենար անգամ Բաֆֆու և նրա Ժամանակակիցների ազգային-քաղաքական հայացքների և հատկապես «Կայծերի» ռոմանտիկ միտվածության նկատմամբ։

1898 թ. Աղայանի գրած ատենախոսության մեջ դեռ լսելի են ազգային-նարոդնիկական գաղափարախոսության արձագանքները։

«Ժամանակակից ատենախոսության» հեղինակը համոզված էր, որ ժողովրդի կեցությունը բարելավելու ուղին հանրային սեփականության ծավալումն է։ Եթե քաղաքներում միայն մասամբ է հնարավոր անցյալից եկող սեփականության այդ ձևի տարածումը, ասում է հեղինակը, անհամեմատ դյուրին է դրա պատվաստումը գյուղում։ Որքան ավելի մեծ է գյուղի ընդհանուր սեփականությունը, նույնքան ավելի բարեկեցիկ է նրա կյանքը, ավելի քաղաքակիրթ և երջանիկ՝ նրա կենցաղը։ «Ժողովրդի բարոյական վիճակը նրա տրնտեսական վիճակից կախումն ունի, իսկ տնտեսական բարեկեցությունը՝ նրա համայնական սեփականությունից։ Մի հասարակության մեջ որքան շատ ու բազմատեսակ լինեն ընդհանուրին պատկանող սեփականություններն ու հաս-

36 ЦГИА, ф. деп. полиции, 102, д. 137, 1895, № 254.

37 Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ 8 էջ 221։

տատությունները, նույն չափով բարձր կլինի նրա բարօրության աստիճանը և նույն չափով սակավ չարիք կգործվի նրա մեջ»[38]։

Ի՞նչ կերպ է կարող ներկա հասարակության մեջ գերակշռող մառնավոր սեփականությունը տարածվել մարդկանց բարեկեցության և երջանկության աղբյուր ծառայող ընդհանուր սեփականության։ Աղայանը այն կարծիքին չէր, որ այդ հնարավոր է քաղաքական կամ սոցիալական հեղափոխության միջոցով։ Համոզված է, որ դրան կարելի է հասնել «առանց թռիչքներ գործելու», աստիճանական զարգացման միջոցով։ Աղայանը հավատացած է, որ մարդասիրական գաղափարի ընդհանրացման միջոցով հնարավոր պիտի դառնա նաև արևմտահայերի ազատագրումը։ Սակայն հայը չի կարող հույս դնել օտարների մարդասիրության վրա, եթե ինքը օրինակ չտա մարդասիրության։ Աղայանը չի թաքցնում, որ արևմտահայերի նկատմամբ նա օգնության հույս ունի Անգլիայից։

«Ժամանակակից ատենախոսության» մեջ յուրովի արտահայտություն էր գտնում 90-ական թթ. երկրորդ կեսում արևմտահայ ազատագրական շարժման գաղափարական տեղատվությունը և մասնավորապես այն տագնապը, որ վերապրում էին այդ ժամանակ հնչակյան կուսակցության կովկասյան կազմակերպությունները սաստկացած ցարական հետապնդումների պատճառով։ 1897 թ. հուլիսի 28-ին կուսակցության կովկասյան մասնաճյուղերից մեկին ուղղած մի նամակում Ավ. Նաղարբեկյանը այլաբանորեն գրում էր այդ մասին. «Ձեզ քաջ հայտնի է, որ վերջին տարիներում մեր առևտրական (իմա՝ կուսակցության—Ա. Հ.) գործերը Կովկասում չեն կարող պարծենալ իրանց փայլով... Դրա ամենագլխավոր պատճառը մեր առևտրական գործակալությունների առանց Լոանդի, առանց հարատևության գործելն է, որը, խոսք չունիմ, ունի նաև իր ուրիշ ներքին պատճառները։ Բայց այսպես կամ այնպես այդ անգործությունը, այդ տարտամ վիճակը, այդ թույլ ընթացքը միջոց տվեց ու ազատ ասպարեզ բացեց մեր մրցակից մյուս առևտրական ընկերություններին (իմա դաշնակցականներին ու գուցե նաև լիբերալ նարոդնիկներին—Ա. Հ.) մեր ոտքի տակից խլելու այն հողն էլ, որ զանազան ջանքերի շնորհիվ առաջվանից ձեռք էինք բերել այդ կողմերը»[39]։

1895—96 թթ. հայկական ջարդերից հետո սուլթան Համիդը մի պահ դադար տվեց օսմանյան սրի զարկերին։ Դիմադիր ուժերին կազմալուծելու քաղաքագիտությամբ նա փորձեց բանակցություններ սկսել հայ հեղափոխականների հետ և անգամ «ներում շնորհել» նրանց։ «Հնչակը» տրամադիր էր հայկական ու հունական շարժումների ազդեցությանը վերադրել գազանի խորամանկությունը։ «Պատավ ծաղրածուն,— գրում էր նա,— որի ակռաները թափվեցան հայկական ոսկորները կրծելուց, կորցրել է այլևս իր խածնելու եղակի հատկությունը»[40]։ Հաջորդ համարներից մեկում նա ավելի որոշ էր արտահայտվում այս մասին. «Հայկական շարժումները խախտեցին ամբողջ Թուրքական կայսրության հիմքերը և հունական շարժումները հիմա վրա հասան բոլորովին այն կործանելու և քանդելու համար»։ Եվ դեռ ավելին. «Հնչակը» կարծում էր, թե այդ շարժումները «տանում են նախ՝ դեպի եվրոպական հիպոկրիտ ու հակա-

38 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, 1963, էջ 104։
39 Մեր հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 45, ց. 1, գ. 39, թ. 1։
40 «Հնչակ», 1897, № 1, էջ 1։

մարդկային կոնցերտի ոչնչացումը և ապա, այդ ուղիով, դեպի Թուրքիայի տապալման ժամը»[41];

Եվրոպական պետությունները և ամենից առաջ Անգլիան տրամադիր էին «մեծահոգությանը» վերագրելու սուլթանի «մեղմացումը»։ Մինչդեռ, թող փչելով եվրոպական դիվանագիտության աչքերին, Համիդը ձգտում էր ապացուցել, որ այլևս Թուրքիան կարիք չունի նրա միջամտությանը և պատրաստ է իր ձեռքով իսկ վճռել հայկական հարցը։ Փոքր ինչ հետո «Հնչակի» հերթական համարն իսկ հանգում էր այն մտքին, որ եվրոպական տերությունները շահագործել են ու շարունակում են շահագործել արևելքի շարժումները հօգուտ իրենց և ի վերջո նաև հօգուտ Թուրքիայի, ընդդեմ սրա յաթաղանի տակ ընկճված փոքր ազգերի[42]։ Հնչակյան ղեկավարներից ոմանք նույնիսկ սկսում են գլխի ընկնել, որ եվրոպական տերությունները և մասնավորապես Անգլիան, որի նկատմամբ բացառապես լավատես էին բոլոր երանգի հնչակյանները, բնավ շահագրգռված չէին արևելյան ազգերի ազատագրությամբ։

Հնչակյան կուսակցությունն ի վերջո դայթակղվում էր կարծելու, թե ազգը կգտներ իր փրկումի ուղին, եթե... նրա մեջ գտնվեն միլիոնատեր հայեր, որոնք բաց անեին իրենց ոսկու սնդուկը արևմտահայ շարժումը ֆինանսավորելու համար։

Հին հնչակյանները գաղափարաբանական որոշ աշխույժ ապրեցին միայն 1903 թ. հետո։ Դրա հիմնական պատճառը պետք է նշմարել Ռուսաստանում սկսվող հեղափոխական իրադրության և հատկապես Կովկասում ուժեղացող բանվորական շարժման մեջ, որն իր ջրապտույտի մեջ էր առել նաև հայ բանվորությանը։ Հնչակյանների շարքերում կատարվում են տեղաշարժեր։ Սոցիալիզմը, որ մինչ այդ սոսկ նարոդնիկական ենցյալից ժառանգած վերապրուկ էր հնչակյանների ծրագրային հայտարարությունների մեջ, կարծես սկսում էր գործնական իմաստ ու բովանդակություն ստանալ և աշխույժ հաղորդել մարքսիզմի ազդեցությանը ենթարկված նրանց բանվորական կազմակերպություններին։

Վերագիրքավորման այս պրոցեսը սկսում է նկատելի դառնալ Թիֆլիսի հնչակյան «Ծիածանական» կոչված երիտասարդության շարքերում տակավին 90-ական թվականների վերջերին։ Պատանեկական տարիների իր հուշերին անդրադառնալով, Վ. Տերյանը պատմում է, թե ինչպես էր տակավին այդ պահին Ռիգայի պոլիտեխնիկումում ուսանելիս, Թիֆլիսի ծիածանականների «Ընկեր» օրգանում զետեղած իր նամակում, Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գիրքերից, Ստ. Շահումյանը սահմանազատվում հնչակյան երբեմնի իր համախոհներից[43]։

Այս նկատելի դարձավ, մանավանդ, 1903 թ. հոկտեմբերին հնչակյան կուսակցության երրորդ պատգամավորական ժողովում, որի աշխատանքներին կենդանություն ու նպատակասլացություն էին հաղորդում մանավանդ Անդրկովկասի բանվորական շրջաններից ժամանած պատգամավորները։ Ահա թե ինչու «ապարյուն «վերակազմյալներից» ոմանք ատրճանակներ պարպեցին նրանց վրա, գետին գլորելով սոցիալիզմի պահանջ առաջադրող Բաքվի պատգամա-

41 Նույն տեղում, № 3, էջ 18։
42 Տե՛ս նույն տեղում, № 4, էջ 25։
43 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Երևան, 1961, հատ. 2, էջ 370 և հտ.

վորներ Հայրին ու Սագունուն և Բաթումի պատգամավոր Տիգրան Իզմիրլյանին։ Հնչակյան կենտրոնն անպատասխան չթողեց այս դեպքը։ Նրա ահաբեկիչներին Եգիպտոսում զոհ դարձավ «վերակազմյալների» պարագլուխ Արփիարյանը։ Իրենց հերթին վերջինիս կուսակիցները ահաբեկման անհաջող փորձ կատարեցին Ավ. Նազարբեկյանի վրա Շվեյցարիայում և Սապահգյուլյանի վրա՝ Ամերիկայում։

Դեպքեր էին սրանք, որոնք հնչակյանների արևելահայ կազմակերպությունների վերակենդանացումից առավել աղդանշում էին 1905 թ. ռուսական հեղափոխության պահին կուսակցության կովկասյան կազմակերպությունների քայքայման սկիզբը։

ИДЕОЛОГИЧЕСКИЕ КОРНИ ФОРМИРОВАНИЯ ГНЧАКИСТОВ

Академик АН Арм. ССР А. Г. ИОАННИСЯН

(Резюме)

Армянская партия гнчакистов была основана в 1887 г. по инициативе примыкавшей к идеям народничества группы студентов-армян Женевского университета. Официальный орган партии — «Гнчак» — заимствовал свое наименование у герценовского «Колокола». Первое воззвание партии, адресованное «к образованной и сознательной молодежи», призывало ее к революционной самодеятельности «в народе, с народом и для народа». Изданная в 1888 г. первая программа партии исходила из положения, что «коммунистические порядки и коммунистические формы бытия» имеют свое основание в бытующих в армянской действительности остатках общинного строя. В этом же усматривалась возможность предупреждения капитализма и гарантия победы социализма у армян.

Считая «отдаленной целью» осуществление социализма, партия признавала своей ближайшей задачей освобождение из-под турецкого ига западных армян и создание на базе населенных армянами областей в Турции, Персии и России независимой армянской демократической государственности.

Лишь с начала 90-х годов, в условиях начавшегося в Закавказье бурного развития капитализма, в идеологических установках гнчакистов произошел формальный крен в сторону идей марксизма. При этом учитывались рост влияния марксизма в политической жизни Запада и необходимость использования международного веса рабочего класса в интересах разрешения армянского вопроса.

Характерно, что если в 1889 г. на первом конгрессе Интернационала гнчакисты были представлены идейным вождем российских народников — П. Лавровым, то впоследствии мандат на представительство своей партии на конгрессе Интернационала гнчакисты передали лидеру российского марксизма — Г. Плеханову.

Конъюнктурное восприятие марксизма привело к тому, что гнчакисты начали рассматривать Турцию как страну, якобы уже втянутую в русло капиталистического развития и имеющую благоприятные условия для развертывания рабочего движения.

Тем не менее, основным ручательством для своей победы гнчакисты продолжали считать силу «организованного меньшинства» и, в частности, благоприятную для положительного разрешения армянского вопроса позицию Англии середины 90-х годов. Именно к этому времени относятся организованные гнчакистами восстания армянского крестьянства в Сасуне и Зейтуне и шумные демонстрации армян в Константинополе. Погромы армян в Турции вызвали в рядах гнчакистов Западной Армении глубокий кризис, приведший в 1896 г. к расколу партии. На состоявшемся в том же году в Лондоне первом съезде гнчакистов ряды партии покинуло большинство ее делегатов из западных армян. Покинувшие съезд делегаты из западных армян клонились к теории и практике либерального реформизма и создали партию так называемых «вераказмялов», т. е. «реорганизованных гнчакистов».

Бурное развитие капитализма в Закавказье и вовлечение армян-рабочих в русло рабочего движения края в период революции 1905 г. привело рабочих членов партии гнчакистов в ряды РСДРП. Оставшиеся в рядах партии «старые гнчакисты», потеряв влияние на массы, приспосабливали свою деятельность к политической линии армянской буржуазии. После установления Советской власти распад партии гнчакистов в республиках Закавказья стал политической неизбежностью.